

Մոնթրեալի հաւաքին Քրիստինէ Վարդանեան յայտարարեց, թէ Հայաստանի ժողովուրդին կողմէ անվստահութեան դրսեւորումը իշխանութեան հանդէպ բացայայտ է



Կարդալ էջ 4

«Հորիզոն» օժտուեցաւ լրատուական տաղաւարով



«Հորիզոն»ի խմբագրութեան նախաձեռնութեամբ անցնող օրերուն «Հորիզոն»ի խմբագրատան մէջ տեղադրուեցաւ լրատուական տաղաւար: «Հորիզոն»ի տաղաւարի սարքաւորումներու համադրման աշխատանքը կատարեցին Յովիկ Կէտիկեանն ու Ճուլիա Սեւանը, իսկ լրատուական գրասեղանը նուիրեց գործարար Գրիգոր Պաշըգճեանը:

Կարդալ էջ 5

Թորոնթոյի Հայ կեդրոնի ընդլայնումի հիմնարկէքի արարողութիւն եւ հողօրհնէք



Կարդալ էջ 3

ՀՅԴ ԳԵՄ-ի Համագանատական սեմինարը տեղի ունեցաւ «Այսօրուան երիտասարդը՝ վաղուան երդուեալը» կարգախօսով



Կարդալ էջ 4



MAZDA
GABRIEL

2025 MAZDA3

CONTACT KEVORK ASADOURIAN,
GENERAL MANAGER, FOR ALL INQUIRIES.
KEVORK@GABRIEL.CA

ANJOU • PLATEAU • ST-JACQUES • ST-LAURENT





Al Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Թորոնթոյի Հայ Կեդրոնի ընդլայնումի հիմնարկէքի արարողութիւն եւ հողօրհնէք



Շաբաթ, 24 Ապրիլ 2025-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Թորոնթոյի ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի շրջափակէն ներս տեղի ունեցաւ Հայ Կեդրոնի ընդարձակման (ACC Beyond) հիմնարկէքի արարողութիւն եւ հողօրհնէք։

Արարողութիւնը կը վայելէր ներկայութիւնը Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Գեորգ. Տէր Բաբգէն Արք. Զարեանի, Հոգշ. Տէր Յակոբ Վրդ. Եսադեպեանի, Թորոնթոյի Ս. Աստուածածին Հայց. Առաք. եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ Հոգշ. Տէր Գարեգին Ծ. Վրդ. Շիրադմեանի եւ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Տաթեւ Ա. Քհն. Միքայէլեանի, Գանատահայոց Թեմի Փոխառաջնորդ եւ Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Զարեհ Ա. Քհն. Զարգարեանի, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ պատուելի Զոհրապ Սարգիսեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի, «Սողոմոն Թեհլիրեան» Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Գառնիկ Հասրեանի, Օնթարիոյ խորհրդարանի անդամ Արիս Պապիկեանի, Գանատայի խորհրդարանի նախկին խօսնակ՝ Տէյ-վիտ Ուորնըրի, Թորոնթոյի Հայ Կեդրոնի յարակից եւ ուղեկից միութիւններու ներկայացուցիչներու, անդամներու, համակիրներու, ծնողներու եւ հայրենակիցներու։

ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի շրջանաւարտներէն եւ Հայ Կեդրոնի անդամներէն հանդիսավար Վարդի Մութաֆեան Գլխաւորի հրաւերով սկիզբ առաւ արարողութիւնը, ուր զրօշակակիր սկաւտներու եւ ՀՄԸՄ-ի շեփորախումբի հնչեղութեամբ նուագուեցան Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները։

Հանդիսավարը բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ըսաւ. «Թորոնթոյի Հայ Կեդրոնը իր հիմնադրութենէն՝ 1968-էն ի վեր եղած է հիմնաքարը հայ ազգի զաւակներուն եւ մեծ ներդրում ունեցած է անոնց կրթութեան, մշակոյթի պահպանումին եւ զարգացումին մէջ։ Թորոնթոյի համայնքը անցեալէն ցայսօր մեծ նուաճում արձանագրած է, ուր ամէն մէկ նորակառոյց ծրագրի փաստն է աճող մեր կարիքներուն»։ Ան իր խօսքին մէջ շեշտեց ընդլայնումին նպատակը, որ մեծ օգուտ եւ ծառայութիւն պիտի մատակարարէ երիտասարդութեան, հայ ընտանիքներուն եւ ապագայ նորահաս սերունդին։ Ան նաեւ երկարատեւ մը ընթացքին երկարող ընդլայնման այս ծրագիրը ուղեւորութիւն կոչեց, որուն յաջողութեան պիտի նպաստեն համայնքի անդամները, նուիրատուները, կամաւորները եւ բարերարները։

Հանդիսութեան ընթացքին հանգէս եկաւ, «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի ներկայացուցիչ Գառնիկ Հասրեան, որ ըսաւ. «Մեծ ուրախութեամբ եւ երախտագիտութեամբ կը կանգնիմ ձեր դիմաց, մեր սիրելի հայ երիտասարդական Կեդրոնի կողքին նոր կառուցուելիք շէնքի հիմնարկէքի այս կարեւորագոյն պահուն։ Ձեռնարկը կը զուգադիպի մայիսեան փառապանծ յաղթանակին՝ 28 Մայիսի անկիւնադարձային հանգրուանի տարեդարձին հետ, բայց այս զուգադիպութիւնը այդքան ալ պատահական չէ։ Անցեալ դարու կէսերուն, աշխարհի տարբեր գաղութներէ Թորոնթօ հասած հայը քաջութիւնն ու գիտակցութիւնը ունեցաւ յստակ տեսիլք մը ունենալու»։ Հասրեան յետագարձ աւանդելով մը ներկայացուց Հայ Կեդրոնի հիմնադրութեան փուլերը՝ իր յարակից Ս. Աստուա-

ծածին եկեղեցիով, ՀՕՄ-ի վարժարանով եւ իր մանկամստերով, մանկապարտէզով, նախակրթարանով եւ երկրորդական դասարաններով, ինչպէս նաեւ «Նոր Հայ Հորիզոն» հեռուստայայտագրով եւ «Թորոնթօ» ամսաթերթով։ Ան աչքի առաջ բերելով տարուէ տարի Կեդրոնի ընդարձակման կարիքը, հաստատեց. «2011-ին Թորոնթօ հայ գաղութը դարձեալ ունեցաւ վերանորոգուած ու ընդլայնուած շքեղ Կեդրոն մը. հետագրքերական է այն իրողութիւնը, որ 28 Մայիս 2011-ին բարեգարգուած Հայ Կեդրոնի բացման օրը, շրջանի հերթապահը իր խօսքին մէջ խոստացած էր, որ այս միայն սկիզբն էր Թորոնթօյի Հայ Կեդրոնի ծառայական դաշտի ընդարձակման։ Եւ ահա այսօր, 14 տարի ետք տրուած խոստումին իրագործումն ու ապագային մեր նուիրուածութեան վերահաստատումն է ընդլայնումի այս արարողութիւնը»։

Ան իր խօսքի աւարտին շնորհակալական եւ երախտագիտական խօսք ուղղեց բոլոր անոնց, որոնք նիւթական եւ բարոյական աջակցութեամբ նեցուկ կը կանգնին հայ գաղութի բազաւածման եւ ըսաւ. «Առ այդ միասին կը կառուցենք ոչ միայն շէնքեր, այլ՝ ժառանգութիւն, ուրեմն վերանորոգուած ուխտով եւ բազմապատկուած եռանդով միշտ զէպի յառաջ»։

Գեղարուեստական ելոյթներով հանգէս եկան ՀՕՄ-ի Ամէնօրեայ վարժարանի «Արամ Խաչատուրեան» աշակերտական նուագախումբը, խմբավարութեամբ Սուրէն Ամիրխանեանի, ինչպէս նաեւ Համագալիւնի «Էրեբունի» պարախումբը, ղեկավարութեամբ Նելլի Կարապետեանի։

Բեմ հրաւիրուեցաւ շինարարական յանձնախումբի ներկայացուցիչ Մայք

Գազարեան։ Ան սահիկներու միջոցով ներկայացուց ներկաներուն մինչեւ 2027 տեղի ունենալիք շինարարական աշխատանքային ծրագրի մանրամասնութիւնները, որ կը կազմէ 17000 քմ. տարածք, երկարական բաժանմունքով, ներկայի շէնքի արեւելեան եւ հիւսիսային կողմերը։ Ան յայտնեց, թէ շէնքը պիտի ընդգրկէ դասարաններ, տարրալուծարան, խոհանոց, ճաշարահներ եւ սրահներ, որոնք պիտի կառուցուին արդիականացուած միջոցներով եւ սարքաւորումներով։ Գազարեան յայտնեց, թէ շինարարական յանձնախումբը կը բացւի 12-15 ամիս, հասնելով մինչեւ 2026-ի վերջերը։

Հանգանակային արշաւի մանրամասնութիւնները փոխանցեց յանձնախումբի ատենապետ Ռազմիկ Թրիթեան, որ նախ ողջունեց ներկաները ապա երախտագիտական խօսքով գնահատեց հանգանակային յանձնախումբի անդամները, որոնք հմուտ եւ մասնագիտական կարծիքներով առաջ կը տանին յանձնախումբի աշխատանքները։ Ան մանրամասնօրէն եւ սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուց հանգանակային աշխատանքները։ Ան տեղեկացուց, թէ 2017-ին գանատահայ աշխոյժ ընկերներ, օգտուելով կառավարութեան կողմէ

Հողօրհնէք... Ծար. էջ 7

Մոնթրէալի հաւաքին Քրիստինէ Վարդանեան յայտարարեց, թէ Հայաստանի ժողովուրդին կողմէ անվստահութեան դրսեւորումը իշխանութեան հանդէպ բացայայտ է

Կազմակերպութեամբ ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան (ԳԵՄ), Չորեքշաբթի, 21 Մայիս 2025-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Ահաբոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ժողովրդային հաւաք, որուն ընթացքին զեկոյց տուաւ Հայաստանէն ժամանած ՀՀ Ազգային ժողովի Հայաստան խմբակցութեան եւ Դաշնակցութեան պատգամաւոր Քրիստինէ Վարդանեան, ներկայութեամբ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանի, ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեանի, Հայ Դատի Կեդրոնական խորհուրդի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի, Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի, Մոնթրէալի «Միհրան Փափազեան» կոմիտէի անդամ Դալար Լեհիմճեանի, Լաւալի «Սարգիս Զէյթլեան» կոմիտէի ներկայացուցիչ Հրանդ Թաշճեանի, միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներու եւ հայրենիքի իրավիճակով շահագրգռուած հայրենակիցներու։

Պատգամաւորին հակիրճ կենսագրականը ներկայացուց ՀՅԴ ԳԵՄ-ի Գանատայի Կեդրոնական վարչութեան անդամ Թալիա Ծապրայեան, որմէ ետք պատգամաւորը հանդէս եկաւ Հայաստանի տիրող իրավիճակին, մեր ներքին եւ արտաքին մարտահրաւէրներուն ու այս հանգրուանին մեր գործունէութեան դաշտին ու գործելակերպին մասին զեկոյցով։

Վարդանեան նախ անդրադարձաւ Հայաստան-Ատրպէյճան, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն եւ խաղաղութեան պայմանագրին, յայտնելով որ այն բացարձակապէս հայկական շահերէն չէ բխած, այլ բառացիօրէն կը հետապնդէ Ատրպէյճանի ու Թուրքիոյ շահերը, յատկապէս երբ այն չի ներառեր մեր գերիներուն հարցը, Հայաստանի սահմաններու պաշտպանութեան հարցը, Արցախի ժողովուրդին վերաբերող որեւէ հարց, յատկապէս Արցախ վերադարձի իրաւունքի հարցը, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի հակամարտութեան հիմքը կը կազմէ, այլ կը ներառէ պահանջներ՝ ի վնաս Հայաստանի։ Պատգամաւորը յիշեց նաեւ դաշնակից երկիրներու՝ յատկապէս Ռուսիոյ եւ Իրանի հետ պետական մակարդակի յարաբերութիւններու վատթարացումը, ապա Եւրոպական միութեան անդամակցելու գործընթացի ոչ մէկ յառաջիադաց կայանալը։

Հայաստանի ներքին իրավիճակին անդրադառնալով պատգամաւորը անդրադարձաւ Հայաստանի մէջ ղեկավար իշխանութեան կողմէ հրահրուող հայատեացութեան, որուն թիրախն է յատկապէս արցախահայութիւնն ու հայկական շահերը հետապնդող կազմակերպութիւններն ու անձնաւորութիւններ, ինչպէս նաեւ Հայ եկեղեցին, սակայն միեւնոյն ժամանակ ըսաւ, թէ բացայայտ է վերջին շրջանի Հայաստանի ժողովուրդին կողմէ անվստահութեան դրսեւորումը իշխանութեան հանդէպ, ինչ որ ներկայ իրավիճակի փոփոխութեան յոյս կը ներշնչէ, միեւնոյն ժամանակ պատգամաւորը յայտնեց, թէ ճանապարհը հեշտ չէ, կան բացում մարտահրաւէրներ։

Անդրադառնալով մեր մարտահրաւէրներուն, նախ ըսաւ. «Մենք ունենք մի իշխանութիւն, որը ունի թշնամական անմիջական աջակցութիւն ու ամէն գնով փորձում է պահել իշխանութիւնը», ապա ընդգիմադիր դաշտին ակնարկելով պատգամաւորը յայտնեց, թէ մենք կը դիմադրաւենք հրապարակային փոխադարձ մեղադրանքներու եւ վիրաւորանքներու գործընթաց, սակայն 2026-ի ընտրութիւններուն ընդառաջ հակամարտութիւնը բնականոն ընթացք է։ Ան վստահեցուց, թէ այս փուլի աւարտին, որքան ալ շարունակուին այս մեղադրանքները, միեւնոյնն է, բոլոր կողմերը լաւապէս կ'ըմբռնեն, թէ յառաջիկայ հանգրուանին պարտաւոր են համագործակցելու, աշխատելու եւ պայմանաւորուելու, յանուն մէկ նպատակի։

Գալով այս հանգրուանին եւ 2026-ի ընտրութիւններուն ընդառաջ մեր կատարելիք գործունէութեան, Վարդանեան յայտնեց, թէ պայքար ունինք տանելիք՝ յատկապէս հանրութեան հետ կապերու սերտացման գծով, արտախորհրդարանական ուժերու հետ համագործակցութեան հարցով, որոնցմէ մէկն է օրինակի համար Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժումը, յատկապէս այսօրուան դրութեան պարագային, որով Հայաստանի տիրող իշխանութիւններուն հանդէպ անվստահելիութեան մթնոլորտը ենթահող կը պատրաստէ հաւաստական փոփոխութեան։

«Փոփոխութիւնը հաւանական է, եթէ ընդգիմադիր դաշտի դերակատարները արդիւնաւէտ մարտավարութիւն որդեգրեն» ճիշդ մարտավարութիւն, ճիշդ հիմեր, ճիշդ գործողութիւններ, որով կը կարողանանք հասնել յաջողութեան։ Հայաստանում յառաջիկայ ամիսներն ու յառաջիկայ տարին որոշիչ է լինելու, ամէն իմաստով, Հայաստանի համար, հայ ժողովուրդի համար, ազգային կառոյցների նաեւ Սփիւռքի համար, սա գոյաբանական ու անկիւնաքարային է բոլորիս համար, դրա համար է, որ ուժերի գերլարում է պէտք էս յառաջիկայ շրջանում, որովհետեւ իրականում հնարաւոր է այդ փոփոխութիւնը, բայց դա հնարաւոր է մի պարագայում, եթէ բոլոր ուժերը ուղղուած լինեն հգ փոփոխութեան։ Հարկ է աչքի առաւ ունենալ գլխաւոր նպատակ ու էդ նպատակի շուրջ լինի համագործակցութիւն։ Հիմա Հայաստանում ջրբաժան է ազգայինի ու ապազգայինի, եւ կը յաղթի այն կողմը, ում նեարդերը աւելի ամուր կը լինին եւ ում համար էս դաժան պայքարին յաղթելը կը լինի գերնպատակ», եզրափակեց Վարդանեան

Նշենք, որ Քրիստինէ Վարդանեան եղած է ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միութեան եւ անոր Կեդրոնական վարչութեան անդամ։ 20 Յունիս 2021-ին «Հայաստան դաշինք» խմբակցութեան ցուցակով ընտրուած է ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր։ Ան անդամ է ԱԺ-ի արտաքին յարաբերական մնայուն յանձնաժողովին, ինչպէս նաեւ Հայաստան-Եւրոպական Միութիւն խորհրդարանական գործընկերութեան յանձնաժողովին։ 2022 թուականին ի վեր կը վարէ ՀՅԴ Հայաստանի հանրային կապերու գրասենեակի համակարգող պատասխանատուի պաշտօնը։

Սոնա Թիթիգեան Կեփիկեան
Լուսանկարը՝ Մայք Թաշճեանի

ՀՅԴ ԳԵՄ-ի Համագանատական սեմինարը տեղի ունեցաւ «Այսօրուան երիտասարդ՝ վաղուան երդուեալը» կարգախօսով

Մայիս 16-19 շաբաթավերջին ընթացքին, Christy lake-ի մէջ տեղի ունեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի երիտասարդական Միութեան համագանատական սեմինարը, որ նուիրուած էր նահատակ ընկեր Քրիստափոր Արթինին։ Սեմինարին կարգախօսն էր «Այսօրուան երիտասարդը՝ վաղուան երդուեալը»։ Սոյն սեմինարին մասնակցեցան 122 ԳԵՄ-ականներ։

Սեմինարը իր բնոյթով իւրայատուկ էր։ Այս տարի ԳԵՄ-ականներուն կողքին հրաուիրուած էին շրջանավարտ 5 ընկերներ, որպէս խմբապետական կազմ։ Ընկերները հսկեցին խումբերու աշխատանքներուն եւ անբաժանելի մասը դարձան սոյն սեմինարին յաջողութեան։ Ի տարբերութիւն նախորդ սեմինարներուն, այս տարի կեցութիւնը վրանային դրութեամբ էր, որուն նպատակն էր բարձրաձնել մեր ընկերներուն մարտունակութիւնը։

Սեմինարի օրակարգը բեղուն էր։ Ընկերները հասան բանակավայր, բաժնուեցան խումբերու, որոնք կրեցին դաշակցական ղեկավար դէմքերու անուններ։ Սեմինարին պաշտօնական բացումէն ետք ընկերները ընթերցին եւ ծանօթացման խաղ մը խաղալով փակեցին առաջին օրուան օրակարգը։ Անկախ աննպաստ օդէն, ԳԵՄ-ականները վաղ առաւօտեան արթննալով կատարեցին իրենց համար կազմակերպուած ֆիզիքական մարզանքները։ Դրօշակի արարողութենէն ետք ընկերները ուղղուեցան դէպի ճաշասրահ, ուր նախաճաշեցին եւ անցան դասախօսութեան։ Կեդրոնական վարչութիւնը գրոյց մը կազմակերած էր «Եսն ու մենք» վերնագրով։ Սեմինարին մասնակիցները պատասխանեցին գրուցավար ընկերոջ հարցումներուն։ Վերջաւորութեան զրուցավար ընկերը իր գրոյցը եզրափակեց, ըսելով թէ զօրաւոր եսեր են պէտք՝ ստեղծելու զօրաւոր մենքը։ Կեանքի մէջ մարդս պիտք է դաւանի իրմէ մեծ գաղափար մը, որուն շուրջ կը գտնէ իր կեանքին գաղտնիքը։ Եւր ժամանակաւոր է, իսկ մենքը՝ մշտական։ Անկէ ետք ընկերները ընթերցին, աւա Խաղոյկին շուրջ ազգային եւ յեղափոխական երգեր երգելով, մէկ անգամ եւս ուխտեցին նուիրուել հայ ժողովուրդի դատին։

Սեմինարին ընթացքին ընդունեցինք 3 դասախօսներ։ Ընկհ. Քրիստինէ Վարդանեանը՝ ՀԵՄ-ի Կեդրոնական վարչութեան նախկին անդամ եւ ՀՀ ԱԺ-ի պատգամաւոր, որ դասախօսեց երիտասարդական միութիւններուն ղերակատարութեան մասին՝ պատրաստելու վաղուան քաղաքական դէմքերը։ Ընկերուհին իր դասախօսութենէն ետք պատրաստած էր աշխատանոց մը։

Երկրորդ դասախօսը ընկհ. Լոբի Ապրաքեանն էր, Սուրբ Յակոբ Ազգային Վարժարանի տնօրէնուհին։ Ան դասախօսեց երիտասարդական միութեան դերին մասին՝ ԳԵՄ-ականներուն ապագայ կեանքի ասպարէզներու զարգացման վրայ։

Ընկեր Ժիրայր Պէօճէքեանն էր սեմինարին երրորդ դասախօսը։ Ան ԳԵՄ-

ականներուն փոխանցեց 2 նիւթեր. առաջինը երիտասարդական միութիւններուն ղերակատարութեան մասին՝ ազգային ազատագրական պայքարին մէջ, իսկ երկրորդ նիւթը առցանց ապահովութեան մասին էր, որուն ընթացքին ընկերը խօսեցաւ անոր կարեւորութեան մասին։

Սեմինարին փակման արարողութեան ընթացքին ՀՅԴ ԳԵՄ-ի Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչ Մոսիկ Արզումանեան փոխանցեց իր պատգամը սեմինարին մասնակիցներուն ըսելով. «Սիրելի՛ ընկերներ, արդէն ժամը հասած է փակելու Քրիստափոր Արթին Համագանատական սեմինարը։ Այս շաբաթավերջին ընթացքին դուք փաստեցիք, որ ազգային պայքարի ջահը փոխանցուած է մեր սերունդին։ Ընկեր Քրիստափոր Արթինի պայքարը մեր պայքան է, ընկերնե՛ր, հայ ժողովուրդի պայքարն է, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պայքարն է, եւ այս պայքարը, ընկերնե՛ր, կը հասնի իր աւարտին միայն յաղթանակով։ Յաղթանակը կը պահանջէ զոհողութիւն, զոհողութիւնը կը պահանջէ մաքուր սրտով, արթուն մտքով եւ հօր հոգիով, ֆիզիքապէս եւ մշտապէս պատրաստ երիտասարդութիւն։ Ընկերնե՛ր, իսկապէս դուք ձեր աշխատանքով նախ դուք ձեզի, ապա ձեր միութեան փաստեցիք, որ դուք պատրատ էք մեր ազգային պայքարին։ Այս է երիտասարդութեան ղերը ազգային պայքարին հանդէպ, ընել այն ինչ, որ ուրիշը չ'ուզեր ընել։ Մենք երդուեալներ ենք, եւ մեր երդումը տուած ենք մեր Հայրենիքին եւ Աստուծոյ առաջ։ Այս սեմինարը ամենամեծ երաշխիքն է մեր գաղութիւն, որ իր զաւակները պատրատ են գոյատեւելու ուժեղ եւ կազմակերպուած ձեւով։

«Մենք Դաշնակցականներ ենք, ընկերնե՛ր, եւ զիրար վարձքը կատարէնք ըսեր։ Այդ երախտագիտութիւնը կը ստանան միայն մեր նահատակները, որոնք անմահ կը մնան մեր մտքերուն եւ սրտերուն մէջ։ Բոլոր նահատակներուն պայքարը կը շարունակուի, երբ անոնց յաջորդող ջահակիրները գան։ Մեր սեմինարին ընթացքին բոլորս միասին հպարտօրէն կանչեցինք «այսօրուան երիտասարդը՝ վաղուան երդուեալը» եւ այսպիսով ստանձնեցինք մեր նահատակներուն պայքարի ջահը։ Կա՛մ կը յիշուինք որպէս պատասխանատու ջահակիրներ, կա՛մ որպէս անկազմակերպ սերունդ։ Մենք պատասխանատու ենք մեր նոր սերունդներուն հանդէպ։ Մենք պիտի զոհուինք, որ ուրիշը ապրի։ Ուրիշէն մի՛ սպասեր ընել այն, ինչ որ դուն պատրատ չես ընելու։ Այս սեմինարին խորագիրն էր ղեկավարութիւնը, եւ ղեկավարը, ընկերնե՛ր, ո՛չ պաշտօն է, ոչ ալ տիտղոս։ Ղեկավարութիւնը առաքելութիւն է, եւ ընկեր Քրիստափոր Արթինը ղեկավար էր, որովհետեւ իր օրինակով թողեց Գանատան եւ դառնալով հայրենադարձ՝ շէնցուց հայրենի օճախը։ Ան շարունակեց իր առաքելութիւնը մինչեւ իր վերջին շունչը հայրենի հողին վրայ։ Հիմա ջահը փոխանցուած է մեզի։ Յաջողութիւն մեր բոլորին»։



Voyages
HAIG
Travel

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՊԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

***Նոր Հասցէ՝**
Voyages Haig Travel
4150 Rue Sherbrooke Ouest suite 404A, Westmount, QC H3Z 1C2

PERMIS DE QUÉBEC

Tel: + 1 514-284-7676
Email info@haigtravel.ca

«Հորիզոն» օժտուեցաւ լրատուական տաղաւարով

«Հորիզոն»ի խմբագրութեան նախաձեռնութեամբ անցնող օրերուն «Հորիզոն»ի խմբագրատան մէջ տեղագրութեցաւ լրատուական տաղաւար: «Հորիզոն»ի տաղաւարի սարքաւորումներու համագորման աշխատանքը կատարեցին Յովիկ Կէտիկեանն ու Ճուլիա Սեւանը, իսկ լրատուական գրասեղանը նուիրեց գործարար Գրիգոր Պաշըգճեանը:

Այս մասին յատուկ ուղերձով հանդէս եկաւ «Հորիզոն» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Վահագն Գարագաշեան եւ ըսաւ. «Համացանցի ընկերային ցանցերու հարթակները վերածուած են տեղեկատուական լայնածիր սպառման լրատուադաշտի՝ ուղղուած ստուար լսարանի: Այսօրուան տեղեկատուադաշտը առցանց զանգուածային լրատուամիջոցներն ու ընկերային ցանցերու տարբեր հարթակներն են: Facebook–ի, Twitter–ի, Instagram–ի նման հարթակներու վրայ արդէն թափ առած է քաղաքացիական լրագրութիւնը (citizen journalism): Նկատի ունենալով այս հրամայականները, «Հորիզոն»ը այս հանգրուանին, հիմնեց տեսալսողական իր տաղաւարը եւ յառաջիկային, այս տաղաւարին մէջ պատրաստուած մեր հաղորդումները հետեւողականօրէն պիտի սփռենք»:

Մոնթէալի մէջ տեղի ունեցաւ Համազգային Քեպլէզի «Սանահին» մասնաճիւղի «Անի» Պարախումբի «Գարնանային ծաղիկներ» ելոյթը



Շաբաթ, 17 Մայիս 2025–ին, Մոնթրէալի հայ գաղութը ապրեցաւ յուզիչ ու խանդավառ պահեր: Արդա–րեւ՝ Collège Regina Assumpta–ի Mar–guerite Bourgeois հանդիսասրահէն ներս տեղի ունեցաւ Համազգային Քե–պլէզի «Սանահին» մասնաճիւղի «Անի» Պարախումբի կրտսերներու «Գարնա–նային ծաղիկներ» ելոյթը, պարուսոյց Լեւոն Արապեանի գեղարուեստական ղեկավարութեամբ:

Բացման խօսքը կատարեց «Անի» Պարախումբի յանձնախումբի ատե–նապետուհի Կարին Սարգիսեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք ներկա–ներուն, շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնց անձնուէր ճիգե–րուն շնորհիւ կարելի եղած էր իրակա–նացնել սոյն ելոյթը: Ան նաեւ երախ–տագիտութեան խօսք փոխանցեց բոլոր ծնողներուն՝ իրենց վստահութեան եւ համագործակցութեան համար:

Ապա հերթաբար բեմ բարձրացան տարբեր տարիքներու խումբեր (ընդա–մէնը տասը) ներկայացնելով հայկական գաւառական թէ՛ արդիական զանազան պարեր: Իւրաքանչիւր խումբ (սկսեալ 5 տարեկանէն) պատրաստած էր երկու պար: Յաջորդաբար ներկայացուեցան Քոչարի, Ագապի, Թամգարա, Հանինա, Գեղցի, Կոմիտասի չորոր, Իշխանաց պար, Լուծթի, Էրզրումի չորոր, Կա–կաչներ, Գող պար եւ Սասնայ պարերը:

Խիստ հետաքրքրական էր տեսնել իւրաքանչիւր խումբի տարիքին հա–մեմատ ընտրուած պարերն ու գունա–գեղ տարազները: Ամենափոքրիկները իրենց մատղաշ տոտիկներու քայլերով ու կլոր թաթիկներու շարժումներով մեծ ուրախութիւն պատճառեցին հոծ բազմութեան: Խումբերու տարիքնե–րը հետզհետէ բարձրանալով յստակօ–րէն երեւան կու գային իւրաքանչիւրին տարած ժրաջան աշխատանքն ու յա–ռաջացումը: Շարժումները կը դառնա–յին համեմատաբար աւելի հաւասար ու համաչափ, աշխոյժ քայլերը՝ աւելի կայտառ, իսկ աղջիկներուն նուրբ շար–ժումները ա՛լ աւելի հեզ ու վայելուչ:

Բոլոր պարողներուն դէմքերէն կը հոսէր հրճուանք ու հպարտութիւն: Հոն կը ցոլանար ուրախութիւն եւ սէր: Հո՛ւս է որ պէտք է անդրադառնալ «Անի» Պարախումբի գեղարուեստական ղե–կավար ու պարուսոյց Լեւոն Արապեա–նի կարեւոր դերին: Յստակ է, որ պրն. Արապեան ոչ միայն կը փոխանցէ հայ–կական պարի ցուցմունքներ այս երի–տասարդ սերունդին, այլեւ ան ամբողջ նուիրումով կ’արթնցնէ սէրը՝ հայկա–կանին հանդէպ:

Ելոյթի աւարտին խօսք առաւ Համազգային Քեպլէզի «Սանահին» մասնաճիւղի ատենապետ Ռուբէն Սար–գիսեան՝ շնորհաւորելով յանձնախում–բը, որ հսկայական աշխատանք տարած էր բեմ բարձրացնելով 230 փոքրիկ ու պատանի: Ան նաեւ երախտագիտու–թեան խօսք յայտնեց կամաւորներու մեծ բանակին (կազմուած մեծ մա–սամբ «Անի» Պարախումբի երէցներու անդամներէն), որ բեմին ետին կ’աշ–խատէր ի շահ ելոյթին յաջողութեան: Երեկոյն վերջ գտաւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Բաբգէն Արք. Չարեանի գնահատական խօսքով ու աղօթքով:

Անհրաժեշտ է անդրադառնալ ու շեշտել, թէ Համազգայինի «Անի» Պա–րախումբը լոկ պար ուսուցող հաստա–տութիւնն մը չէ: Ան ունի շատ աւե–լի մեծ ու կենսական առաքելութիւն: Այսպէս՝ երբ հայ փոքրիկը կամ պատա–նին հայկական տարազ հագած բեմ կը բարձրանայ եւ հայկական երաժշտու–թիւն լսելով ազգային պար կը պարէ, անոր մտքին ու հոգիին մէջ կը գրոշմ–ուի հայկականութիւն, նուրբ ճաշակ եւ յարգանք՝ որակաւորին ու գեղեցիկին հանդէպ: «Անի» Պարախումբը կ’երաշ–խաւորէ Մոնթրէալի հայ գաղութին գոյատեւումը՝ պատրաստելով պատաս–խանատու եւ հայրենասէր հա՛յ երիտա–սարդներու բանակ մը:

Բոլորի՛ն վարձքը կատար:

Փաթիլ Հարպոյեան

Մոնթէալի մէջ տեղի ունեցաւ արժանթինահայ գրող Խաչիկ Տէր Ղուկասեանի «Սահմանելի» գիրքին ներկայացումը

Կազմակերպութեամբ Համազ–գայինի Քեպլէզի «Սանահին» մաս–նաճիւղի Գրական յանձնախումբին, Հինգշաբթի, 15 Մայիս 2025–ին, երե–կոյեան ժամը 7:30–ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ արժանթինահայ գրող Խաչիկ Տէր Ղուկասեանի «Սահմանե–լի» գիրքին ներկայացումը, ներկայու–թեամբ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տէր Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանի, Համազգայինի Կեդրոնական վարչու–թեան անդամ Լորիկ Սապունճեանի, Գանատայի Շրջանային վարչութեան անդամներ Թամար Շահինեանի, Մա–րալ Պէրպէրեանի եւ Ծովիկ Կուտեանի, վարչութեան ներկայացուցիչ Ռուբէն Սարգիսեանի եւ անդամներու, ինչպէս նաեւ խումբ մը համազգայնականներու եւ գրասէրներու:

Ներկայացման բացումը կատա–րեց Համազգայինի Քեպլէզի «Սա–նահին» մասնաճիւղի Գրական յանձ–նախումբի ներկայացուցիչ Նանոր Մնապեան, որմէ ետք Համազգայինի «Բագին» պարբերականի խմբագիր Սոնիա–Սանան Քիլեճեանի գրուցավա–րութեամբ սկիզբ առաւ գիրքին հեղի–նակ, գրող, հրապարակագիր եւ միջազ–գայնագէտ Խաչիկ Տէր Ղուկասեանի հետ մտերմիկ գրոյցով գիրքին ներկա–յացումը:

Զրուցավարը նախ անդրադար–ձաւ հեղինակին գրական առաջին հրա–պարակումներուն, որոնք լոյս տեսած էին Պէյրութի Նոր Գրականութիւն խմբակին հրատարակած «Սէր» հատո–րին մէջ եւ ըսաւ. «Յիշեցի Նոր Գրա–կանութիւնը եւ Սէրը, որովհետեւ այս հատորին մէջ տեղ գտած "Քայքայումի մը առանձնութիւնը" առաջին գրու–թեան մէջ գրողը կ’ապրի բառերով միայն ու կը փորձէ քայքայումի մը առանձնութիւնը պեղել՝ ո՞վ, ո՞ւր, ե՞րբ հարցադրումներով, որոնք կու գան

այդ հատորէն, գրուած 1986–ին եւ լոյս տեսած 1988–ին»:

Զրուցավարը այլազան հարցում–ներով փորձեց բացայայտել գրողին նե–րաշխարհը, միջավայրի ազդեցութիւնը, յուզաշխարհը, լեզուն, ոճը, բառերու աղբւսը, այլ գրողներէ տպաւորու–մը, բանաստեղծութեան բնորոշումն ու քաղաքականութեան հետ կապակցու–մը:

Հեղինակը թէ՛ գրուցավարին եւ թէ՛ ներկաներուն հարցադրումներուն պատասխանեց սպառիչ լուսաբա–նութեամբ եւ ըստ կարելւոյն թարգ–ման հանդիսացաւ իր գրութիւններուն շուրջ ներկաներուն համար անիմանա–լի կէտերուն մասին իր մտածումնե–րուն եւ շարժառիթներուն: Ան իր գրոյ–ցի աւարտին անդրադառնալով գրա–կանութեան եւ քաղաքականութեան առնչութեան ըսաւ. «Գրողը ամէն ինչէ՛ առաջ պէտք է մտածէ լաւ գրելու մա–սին, գեղարուեստականին հասնելու մասին, եւ նոյնիսկ եթէ կտորներ կան, որոնց քաղաքական գաղափարները չենք բաժնեք, բայց միեւնոյն ժամանակ շատ գեղեցիկ են, ինչպէս օրինակ Չա–րենցի «Ամբոխները խելագարուած»ը. այսինքն բնաւ խելագարուելու տրա–մադիր չեմ այդ ամբոխներուն նման, ոչ ալ այդ խելագարուած ամբոխ–ներուն աշխարհին բերած աղէտին կը հաւատամ, բայց կտորը որքան որ գաղափարախօսական է քաղաքականօ–րէն, բայց նաեւ բացառիկ ստեղծագոր–ծութիւն է»:

Ներկայացման ընթացքին պար–բերաբար գիրքէն ընթերցումներ կա–տարեցին Լորիկ Սապունճեան, Յարութ Չուլճեան, Նանոր Մնապեան, Զեփիւռ Ասատուրեան, Բաֆֆի Աճէմեան եւ Ծովիկ Սարեան:

Աւարտին տեղի ունեցաւ գիրքի մակագրում հեղինակին կողմէ, ինչպէս նաեւ պատշաճ հիւրասիրութիւն:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

Կազմակերպութեամբ ՀՕՄ–ի Գեմպրիճի «Մեղրի» մասնաճիւղին տեղի ունեցաւ Մայրերու օրուան տօնակատարութիւն

ՀՕՄ–ի Գեմպրիճի «Մեղրի» մասնաճիւղը կազմակերպեց իր աւանդական Մայրերու օրուան ձեռնարկը, Ուրբաթ, 9 Մայիս 2025–ին, երեկոյեան ժամը 7:00–ին:

Ատենապետուհի Մարալ Պետիրեանի բարի գալուստի խօսքէն ետք, Քանի Թիթիզեան անգլերէնով ընթերցեց դասախօս Նաթալի Կէօքչէնեանի ամփոփ կեն–սագրականը:

Դասախօսը մեկնաբանեց «THE WELL–SPOKEN WOMAN – Ճարտարա–խօս Կինը» Գիրքին բովանդակութիւնը, որուն նպատակն է պատրաստել կիները, որպէսզի անոնք ինքնավստահ եւ ազդեցիկ ձեւով իրենք գիրենք ներկայացնեն հանրութեան:

Ան պարզեց հետեւեալ կէտերը, մեր ամէնօրեայ կեանքէն օրինակներ տալով, կենցաղագիտութեան, կեցուածքի, խօսակցական ոճի, քաղաքավար մօտեցումի ու–րիշներու նկատմամբ եւ այլն.

- Ինչպէ՛ս կին մը իր գաղափարները պարզ եւ արդիւնաւոր ձեւով կրնայ արտայայտել:
- Ինչպէ՛ս կին մը միշտ պատրաստ ու ներկայանալի կրնայ ըլլալ:
- Ինչպէ՛ս կին մը իր գաղափարները վստահութեամբ կրնայ արտայայտել:
- Ինչպէ՛ս կին մը հանրութեան մէջ խօսելու մարմաջը կրնայ յաղթահարել:

Աւարտին ատենապետուհի Մարալ Պետիրեան ծաղկեփունջ մը նուիրելով շնորհակալութիւն յայտնեց դասախօսին:

Ապա գաղութիս հովիւ Արժանապատիւ Տէր Նշան Քհն? Մանուկեան իր խօս–քին մէջ ըսաւ. «Մեծ ուրախութիւն է հայ մայրերու հետ գտնուիլը այսօր: Մեր մայրերը որքան արժեւորենք, որքան մեծարենք քիչ է, անոնք ունին զանազան յատկութիւններ, Անոնք հրաշագործ կիներ են: Մայրութիւնը առաքելութիւն է, սուրբ եւ ծանր պարտականութիւն, մեզի ծնունդ կու տան, կը դաստիարակեն, քա–ղաքավարութիւնն կը սորվեցնեն, կըթուլիւն կը փոխանցեն, սերունդ կը կերտեն»:

Ան իր խօսքը աւարտեց Յովհաննէս Շիրազի «Մայրս» բանաստեղծութեամբ: Հիւրասիրութեան ընթացքին գեղարուեստական յայտագրով հանդէս եկաւ Ալին Պչաքճեան: Որմէ ետք օրուան բախտաւորը հանդիսացաւ դասախօս Նաթալի Կէօքչէնեան, օրուան կարկանդակը հատեցին երիցագոյն Բրաբրոն Գապաճուզեան եւ կրտսերագոյն Մարինա Սեփէթճեան մայրերը: Ապա բազմաթոռնիկ մեծ մայր Համեստ Անթունեանը ստացաւ ծաղկեփունջ մը:

Սալիի Քելէշեան

ՀՈՐԻԶՈՆԻ ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻՆ ԾՈՒՐԶ

ՅիսուՄ տարի եւ ամեւի

Բ.

Ինչպէս գրած էինք մեր մախորդ թիւով, Սուրբ Յակոբ ազգային վարժարանի (ՍՅԱՎ.) 50-ամեակին առթիւ կայացաւ սոյն զրոյցը մասնակցութեամբ տնօրէնուհիին՝ Լորի Ապրաքեանի եւ հայերէնի դասաւանդների՝ մանկապարտէզի Մաղիկ դասարանի ուսուցչուհի Սոնիա Բաբախեանն-Գուգունեանի, մախարթարանի Գ. եւ Դ. կարգերու ուսուցչուհի Զեփիւռ Հանեան-Ասատուրեանի եւ երկրորդականի ուսուցչուհի Լորիկ Սապուննեան-Մատուրեանի։

Լորիկ – *Ես ամէնէն նորն եմ, բնականաբար երկրորդականի պարագային, պէտք է ըսել որ ինչպէս Զեփիւռը նշեց, գլխաւորաբար մենք նիւթերու հարց ունինք։ Օրինակի համար՝ 10–րդ դասարանի պարագային ունինք ծրագիր մը որ իրապաշտ սերունդով կը սկսի. կ’անդրադառնանք ընկերային հարցերու. եկուր այս մասին գտիր քու սովորական դասաւանդելիք նիւթդ ամրագրող, անոր հետ յարակից ընթացող տեսանիւթ, լսատեսողական նիւթ։ Շատ կը պատահի, որ եթէ նոր գրող մըն է, որ կը ներկայացնեմ եւ եթէ արեւելահայերէնով տեսանիւթ մը գտայ, ձայնը կ’անջատեմ եւ ե՛ս կը պատմեմ՝ համադրելով նկարը ձայնին հետ, բայց անշուշտ շատ աւելի իտէլական պիտի ըլլար, եթէ մենք ունենայինք պատրաստ նիւթեր։ Մի մոռնաք նաեւ, որ մենք ունինք ուրիշ գլխաւոր մեծ հարց մը ինչ կը վերաբերի Գանատայի եւ Քեպէզի ընկերութեան, որովհետեւ անգլերէն եւ ֆրանսերէն նիւթերու զուգահե՛ռ կը փորձենք դասաւանդել, երբ այդ նիւթերուն մէջ իրենք կ’անդրադառնան ներկայ 21–րդ դարու ընկերութեան հարցերուն, մենք դիմացը նոյնը չունինք հայերէնով։*

Նոյնպէս, օրինակ, երբ պիտի անդրադառնանք երիտասարդութեան հարցերուն, ստիպուած ենք աշակերտներուն տրամադրել որոշ բառամթերք մը կամ ստեղծել նոյնիսկ։ Անցնող օրուան ընթացքին ամբողջ նահանգին մէջ բռնածաղրի դէմ օր էր, եկէք հիմա այդ մասին նիւթ գտէք հայերէնով։ Նոյնը՝ ամբողջ արհեստագիտութեան պարագային. պատանեկան տարիքի աշակերտները տեւաբար կապուած են ընկերային հաղորդակցութեան ցանցերուն, ես չեմ կրնար իրենց տալ 10 էջնոց բան մը եւ ըսել՝ գացէ՛ք կարդացէ՛ք. անպայման պէտք է հետը տեսանիւթը ըլլայ։ գլխաւոր դժուարութիւնը մեզի այդ է։

Վ.Ա. – Իսկ կը քաջալերե՞ք որ հայերէն գրեն գործիքներուն վրայ, որովհետեւ այդ ալ հարց է, նոյնիսկ հայերէն գիտցող շատ մարդիկ միայն լատինատառ կը գրեն, կ’աշխատի՞ք այդ ուղղութեամբ։

Լորիկ – *Ուրեմն կան աշակերտներ, որոնք կը նախընտրեն շարագրութիւնը document–ով տալ, ես շատ յաճախ կ’ուզեմ ձեռագիր կարգալ, ձեռագիր տեսնել, բայց կան նաեւ աշխատանքներ, որ կ’ուզենք, որ իրե՛նք մեքենագրեն, այսինքն՝ վարժուին հայերէն շարագրելու։*

Լորի – *Կ’երկրորդեմ ըսուածները։ Կը կարծեմ նաեւ, թէ հարցերէն մէկն ալ այն է, որ պզտիկներուն պէտքերը կը տարբերին ժամանակին ընթացքին, եւ մենք որպէս ազգային վարժարան միշտ պարտաւորութիւնը կը զգանք, որ փորձենք ընկերակցիլ նաեւ այդ դժուարութիւն ունեցող աշակերտներուն, ընտանիքներուն, բայց շատ մը դպրոցներու մէջ կա՛ն յատուկ մասնագէտներ, մեր քով այդ մասնագիտութիւնը չկայ։*

Վ.Ա. – Դուք բոլո՛րդ մասնագէտ էք...

Լորի – *Տարիներու ընթացքին մենք բաւական աշխատեցանք ծրագրի մը վրայ, որ քայլ պահէ տեղական պետական կրթական ծրագրին հետ, այսինքն՝ որ մեր դպրոցի ծրագիրը չըլլայ պարզապէս գիրքի մը բովանդակութիւնը, այլ հիմնուի իսկական կարողականութիւններու վրայ, եւ երբոր աշակերտը ֆրանսերէնի մէջ որոշ թեմա մը կ’առնէ, կամ քերականական որոշ օրէնք մը կը սորվի, կարելի եղածին չափ անշուշտ հայերէնի մէջ նոյնը ըլլայ, որովհետեւ պզտիկներուն համար այդ աւելի դիւրին է. երբոր ֆրանսերէնով կը սորվին մակբայ մը շատ աւելի արագ կրնան այդ կապերը ստեղծել հայերէնով եւ անգլերէնով։ Ուրեմն շատ կը փորձենք այդ տարբերութիւնը չզգացնել մեր աշակերտներուն, որպէսզի չկարծեն, թէ հայերէնը երկրորդական լեզու է իրենց համար, մինչդեռ տեղ–տեղ ակնյայտ է այդ, որովհետեւ չկան կամ տակաւին չունինք անհրաժեշտ նիւթերը հայերէնով։ Թեմաներ կան որ համաշխարհային կը համարուին, բոլորին սրտին կը խօսին, օրինակ՝ Բաֆֆիի բոլոր գիրքերը որ մեր աշակերտները կը կարդան, չա՛տ կը սիրեն եւ կ’ապրին այդ գիրքերուն հետ։*



Սոնիան, Զեփիւռը, Լորիկը, գրուցավարը եւ Լորին

Բայց եւ այնպէս երբոր կ’անցնինք սիրային պատմութեան մը, չենք գտներ համապատասխան նիւթերը։ Տիկին Զեփիւռը չըսաւ, շատ գեղեցիկ աշխատանք մը ըրած է աշակերտներուն հետ, որ ձայնագրուեցաւ ալ. շարագրել բանջարեղէնի ըմբոստութիւնը։ Գիրքը կարդացին, յետոյ ստիպուեցան գրել բանջարեղէնի վրայ հանելուկներ, կատարեցին արձանագրութիւններ, եւ երբ կը լսես զանոնք, կ’անդրադառնաս, որ իրենց հաճոյքը ակնյայտ է։ Զանք կ’ընենք անպայման հո՛ն հասնելու, բայց ճամբան երկար է եւ արդէն ուշ ենք։

ԶԵՐ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երրորդ հարցումովս կ’ուզեմ լսել իրենց թելադրութիւնները՝ աշխատանքը բարելաւելու ի խնդիր։

Սոնիա – *Մաղիկ դասարանին մէջ շատ կ’երգենք, որովհետեւ Անահիտ Սարգիսեանի գիրքերու շարքը կը գործածենք, բայց տօնական առիթներուն, օրինակ՝ Վարդանանցի մասին, երբ կ’ուզեմ բան մը սորվեցնել, չունիմ մանկական արտասանութիւն մը, միայն «Հայրի՛կ, ըսէ՛ ո՛վ է Վարդան»–ը կայ, եւ շատ ձանձրացուցիչ կը դառնայ ամեն տարի նոյն արտասանութիւնը սորվեցնել ու լսել։*

Գիտէք, երբ հայկական տօներ ըլլան, մամաները շատ կը սիրեն որ պզտիկները արտասանեն...

Զեփիւռ – *Գիտեմ թէ ինչ որ խօսուեցաւ, Լորիկը ըսաւ, կան նախ աշակերտներուն մակարդակի տարբերութիւնները. անցեալին գիտէինք, թէ աշխատասէր, միջակ եւ ծոլլ էին, կամ տկար, հիմա 6 մակարդակի կրնամ բաժնել դասարանը, նոյնիսկ 8 կամ 14... Մենք օգնութեան պէտք ունինք դասարանին մէջ, որպէսզի իբրեւ ուսուցչի՝ հանգիստ ըլլայ խիղճս, եւ ես 25 աշակերտներէս իւրաքանչիւրին իր արդար իրաւունքը տամ։ Երբ դասարանին մէջ կը տեսնեմ գերազանց աշակերտս նստած էր սպասէ, որովհետեւ ես յաւելեալ ժամանակ պէտք է տամ կարգապահական կամ ֆիզիքական կարիքով աշակերտի մը, կամ անդին հայերէն չգիտցող աշակերտ մը ունիմ... Լուծումները կան, բայց արմատական օգնութիւնը շատ աւելի կարեւոր է։*

Ես առաջարկ մը ունիմ, որ դասարան մը բացուի ամեն մէկ մակարդակի համաձայն, եւ ուսուցիչ մը զբաղի յատուկ պարագաներ ներկայացնող աշակերտներով։ Ես բացարձակապէս չեմ ուզեր հայ աշակերտ մը դպրոցէն դուրս մնայ, բայց եթէ ես որպէս կազմակերպուած դպրոց չեմ կրնար օգտակար դառնալ այդ աշակերտին, ես արդար չեմ այդտեղ, եւ այդ աշակերտը յանցանք չունի, եթէ ինքը այդպէս է։

Լորիկ – *Իմ պարագայիս թելադրանքէ աւելի մաղթանք է, որովհետեւ գիտեմ ինչ են պայմանները եւ գիտեմ երկրորդականի մէջ որքան ծանրաբեռնուած են իրենց դասանիւթերով եւ պետական քննութիւններով, բայց շատ աւելի լաւ պիտի ըլլար, եթէ մեր աշակերտները իրենց սորվածը կարենային արտայայտել. օրինակի համար՝ երբ թատերախաղ կը կարդանք կարենանք այդ թատերախաղը իսկապէս բեմականացնել։ Մկնճան կը սիրեն Մուշեղ Իշխանի «Մեռնիլը որքան դժուար է» թատերախաղը, որ ուղղակի կ’ուզեն բեմականացնել, նոյնիսկ իրենք իրենց մէջ, սակայն այդ մենք միայն ընթերցումի ճամբով կ’ընենք, բայց երեւակայեցէք ինչ ուրախութեամբ պիտի ներկայացնէին զայն՝ քանի մը կարողականութիւն միասին դնելով բեմին վրայ։*

Զեփիւռ – *Հոս կ’ուզեմ պզտիկ բան մը աւելցնել.*

մեր երիտասարդները սորվին հայերէնով սիրե՛լ, աղջիկ տղայ սէ՛ր արտայայտել. չեն գիտեր, որ մենք ինչ գեղեցիկ երգեր ունինք, որ եթէ այդ երգը երգես, կրնաս ըսել այդ աղջկան «դուն որքան գեղեցիկ ես»։

Լորիկ – *Մենք սիրային նամակ գրելու աշխատանք մը ըրինք ճիշդ այդ շաբաթը որ Սուրբ Սարգիս եւ Վալընթայնը էր, սիրային նամակ գրել եւ այս աշակերտները ելան ամեն մէկը իր ծնողքին գրեց այդ սիրային նամակը։ Ըսի այս փախուստի ձեւ է, 15–16 տարեկան տղա՛ք էք, պէտք է գիտնաք ձեր զգացումները արտայայտել. աւելցուցի, որ լաւ, հայրենիքիդ ալ կրնաս գրել, հայրենասիրութիւնն ալ սէր է, երեսիս նայեցան։ Բայց քանի մը հոգի մարտահրաւէրը ճիշտ ձեւով ընդունած եւ շատ աղուոր գրած էին եւ տակն ալ նշած, թէ տիկի՛ն, չկարծես որ իրական է, ասի երեւակայական է...*

Կրնա՞մ բան մըն ալ աւելցնել. Գիտեմ, որ թէ՛ միութիւնները, թէ՛ դպրոցը գիրար կը յարգեն, իրարու տեղ կու տան, մենք նոյնիսկ ուշադրութիւն կ’ընենք, որ երբ աշակերտները բանակումի պիտի երթան, յաջորդ օրը գրաւոր չենք պահանջեր, այսինքն այդ սերտ գործակցութիւնը կայ, բայց նաեւ հայերէնախօսութեան այդ ամբողջ աշխատանքը, որ մենք դպրոցէն ներս կը փորձենք ընել, պէտք է ընեն նաեւ այդ միութիւնները, որոնք ունին դպրոցական տարիքի անդամներ, պէտք է իրենք նախանձախնդիր ըլլան, որ իրենց պատասխանատուները մայրենի լեզուով արտայայտուին։ Նոյնն է պարագան նաեւ ծնողներուն, որոնք, օրինակ, երբեմն կը կարծեն, թէ իրենց զաւակը եթէ ՀՄԸՄ զրկեցին կամ Սուրբ Յակոբ, վերջացաւ իրենք ընելիք չունին։ Երբ երեխաները դպրոց կը ձգեն եւ իրենց բարի օր կը մաղթեն, այդ հայերէնո՛վ ընեն, մանաւանդ երբոր գիտես, թէ հայր ու մայր հայ են, հայախոս են։ Դպրոցը որքան ալ փորձէ հրաշք մը ընել, զաւակը վերջ ի վերջոյ տուն պիտի վերադառնայ։ Բոլորէն պէտք է խնդրենք հայերէն խօսելու այդ ճիւղը ընել, որպէսզի գործը դիւրին ըլլայ բոլորիս համար։

Լորի – *Կարծեմ շատ բաներ ըսուեցան, խօսեցանք արդիական նոր գործիքներ, վիտէոներ, որ պզտիկներուն հայերէնը աւելի դիւրին եւ չօշափելի դարձնեն դասարանէն դուրս։ Կը կարծեմ, թէ պատճառը, որ անգլերէնին կը դիմեն այն է, որ իրենց լեզուական աշխարհը անգլերէն դարձած է Youtube–ը, Tik tok–ը անգլերէն են, ուրեմն պէտք է փորձենք հոն թափանցել, – ինչպէ՞ս, չեմ գիտեր, – բայց հոն է, որ շատ աշխատանք պէտք է տարուի, որպէսզի «Happy birthday» երգելու տեղ երգեն «Շատ տարիներ քեզի» կամ «Բարի տարեդարձ»։*

Միւսը անշուշտ նիւթականի պակասն է. գաղափարները կան եւ մեր անձնակազմը խենթանալիք է, չուենցածովն իսկ ինչե՛ր կ’ընէ, բայց եթէ քիչ մը աւելի նիւթական միջոցներ ունենայինք, վստահ եմ, շատ աւելի բան պիտի կարենայինք ընել։

Վ.Ա. – Մեծապէս շնորհակալ եմ բոլորիդ։ Կը յուսամ ձեր ձայնը կը լսուի, եւ ինչպէս միշտ, այս առթիւ ա՛լ աւելիով մեր համայնքի անդամները լայն կը բանան իրենց քսակները...

(Շնորհակալութիւն Սոնա Թիթիգեան–Կէտիկեան–նին, որ կատարեց ձայնագրութեան արտագրումը, որմէ ալ կարելի եղաւ խմբագրել այս զրոյցը։)

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
(Շար. 2 եւ վերջ)

Armenian Catholic Patriarch meets Pope Leo XIV, discuss Middle East and Lebanon visit



BEIRUT — The Press Office of the Armenian Catholic Patriarchate issued the following statement:

Patriarch Raphael Bedros XXI Minassian, Catholicos-Patriarch of Cilicia of the Armenian Catholics, visited His Holiness Pope Leo XIV in a meeting held at the Apostolic Palace in the Vatican.

During the meeting, an in-depth discussion took place regarding the situation of the Armenian Catholic Church and the challenges it faces during this critical period. The conversation also covered urgent issues affecting Lebanon and the broader Middle East, amid the ongoing political, humanitarian, and spiritual crises.

At the conclusion of the meeting, Patriarch Minassian extended an invitation to His Holiness to visit Lebanon at the earliest opportunity, emphasizing the importance of his pastoral presence in the current circumstances. Pope Leo XIV expressed deep interest in the unique coexistence between Christians and Muslims in Lebanon, stressing the need to support and strengthen it as a cornerstone for peace and stability in the region.

This encounter reflects the profound spiritual partnership between the Holy See and the Armenian Catholic Church, and their shared commitment to the message of hope and unity in the face of challenges.

Armenia’s shadow economy equals a fifth of GDP, half of what it was in the last decade

YEREVAN — Armenia’s ongoing shadow economy is estimated to be equal 20 percent of the country’s gross domestic product — a key indicator of a nation’s economic performance.

According to head of Armenia’s State Revenue Committee Eduard Hakopyan, who revealed the estimation on May 22, there is around 200 billion to 300 billion drams (almost \$1 billion) that are circulated outside of Armenia’s legitimate economic earnings, which are taxed and from which the government derives its revenues.

Hakopyan claimed that the current figures are significantly lower than what the estimated percentage has been, arguing that the current government has significantly decreased the amount of money flowing into the country from outside sources. He did not report on the population shifts during the same time period that can have an impact on the numbers.

“There are different estimates for the ‘shadow’ economy. For example, five to seven years ago it was as high as 35-40 percent. The Statistical Committee last estimated the size of the ‘shadow’ economy at 22 percent in 2022. Now, according to different experts’ estimates, it is about

20 percent,” Hakopyan said at a press conference.

SO-CALLED SHADOW ECONOMY INCLUDES FUNDS SENT BY RELATIVES LIVING ABROAD

The so-called shadow economy is estimated to include funds being sent from relatives of Armenian residents living abroad. This “income” generally is not reported and individuals receiving these sums do not pay income taxes.

“Currently, the SRC and the Ministry of Finance has estimated the ‘shadow’ revenues to be at 200 to 300 billion drams. A few years ago these figures were two to three times higher,” Hakopyan said, adding that it is extremely difficult to calculate those amounts in the agriculture and jewellery sectors.

According to the SRC data, from January to April 2025 the turnover unsanctioned revenue was at 84 billion drams (more than \$ 200 million), the growth compared to the same period of 2024 amounted to 146 percent. At the same time, tax revenues for January to April increased by 14.5 percent or 120 billion drams (around \$300 million) compared to the same period last year.

U.S. working to stop Azerbaijani invasion of Armenia, Rubio says

WASHINGTON — Secretary of State Marco Rubio told House Foreign Affairs Committee members on May 21 that the United States is actively working to prevent an Azerbaijani invasion of Armenia.

The statement was made in response to bipartisan calls from Representatives Jim Costa and Chris Smith to enforce Section 907 restrictions on U.S. military aid to Azerbaijan and secure the immediate release of Armenian hostages, reported the Armenian National Committee of America (ANCA).

“We thank Congressmen Smith and Costa for raising the urgent need for stronger U.S. leadership in holding Azerbaijan accountable for its aggression and ongoing abuse of Armenian hostages, and welcome Secretary Rubio’s constructive response – in particular his assurance that the Trump-Vance Administration is committed to preventing an Azerbaijani invasion of Armenia and ensuring the release of Armenian prisoners,” stated ANCA Executive Director Aram Hamparian.

Rep. Chris Smith, raised concerns about Azerbaijani war crimes and political hostages: “It’s very clear that after the genocide committed by Aliyev against the Armenians, there are many, many political prisoners and POWs being held... I would just encourage you to do whatever you can to get those men and women released — at least 300.”

Rubio acknowledged the urgency of the issue, stating that the U.S. is using its diplomatic presence to prioritize human rights and peace.

“The issues you raised about prisoners and human rights are critical... Azerbaijan provides us an opportunity to do that in the context of the broader peace that we’re trying to establish.”

Rep. Jim Costa urged U.S. support for Armenia and called for an end to U.S. military aid to Azerbaijan, stating: “We’ve tried to get Republican and Democratic administrations to forego the waiver on Section 907 on military aid to Azerbaijan. Finally, last year, the Biden Administration rightfully refused to issue the waiver. I think it should be permanent.”

Secretary Rubio replied, “We have not made a determination on that yet because what we are focused on now is getting them to agree to a peace agreement that does not cause them to invade a neighbouring country, Armenia,” calling an Azerbaijan-Armenia war, “destructive, counterproductive, and the last thing we need right now in the region.”

The ANCA reiterated its longstanding call for full enforcement of Section 907 of the FREEDOM Support Act, which restricts U.S. assistance to Azerbaijan until it ceases offensive force against Armenia and Artsakh.

“We continue to urge Secretary Rubio and the Trump-Vance Administration to maintain and uphold the enforcement of Section 907 restrictions on military assistance to Azerbaijan – a critical tool at our disposal to deter the very real threat of war,” stated Hamparian. “We thank our Congressional allies for their continued leadership to ensure not a dollar of U.S. taxpayer money is used to arm Azerbaijan’s genocidal regime.”

Aliyev demands Yerevan’s position on ‘Western Azerbaijanis’ return

ANKARA—President Ilham Aliyev of Azerbaijan, once again, demanded on Wednesday that Yerevan ensure the return of Azerbaijanis who lived in Armenia, in what he has been calling “Western Azerbaijan”—a direct territorial claim from Armenia.

“Armenia must express a clear position on the issue of when and under what conditions Western Azerbaijanis will be able to return to their ancestral homeland. We expect the Armenian leadership to receive representatives of the community to discuss this issue,” Aliyev said in a written statement to participants of a conference being held in Turkey on the subject.

“This issue will remain on Azerbaijan’s agenda until that

return becomes a reality,” he said. “Of course, security guarantees must also be provided to Western Azerbaijanis returning to their homeland.”

Aliyev also emphasized that Yerevan’s lack of response on the matter, “hinders the establishment of peace,” adding yet another demand to his list of preconditions for the signing of a peace treaty with Armenia, despite both sides announcing the finalization of the document’s language.

Aliyev, in the past, voiced similar demands about the so-called “Western Azerbaijanis” when he organized a forum in December on “mechanisms for the return of Azerbaijanis to their historical homeland”

which Baku says covers much of modern-day Armenia described by it as “Western Azerbaijan.”

Prime Minister Nikol Pashinyan and other government officials have characterized Aliyev’s characterization as territorial demands against Armenia.

As recently as May 13, Aliyev repeated at least two other preconditions for signing an Armenian-Azerbaijani peace treaty: the dissolution of the OSCE Minsk Group on Nagorno-Karabagh and a change of Armenia’s constitution. He expressed confidence that Yerevan will eventually fulfill both demands, despite the fact that none of these matters reportedly are contained in the language of the peace agreement.

Government prosecutes journalist over anti-Pashinyan protest coverage

YEREVAN — An Armenian journalist is facing criminal charges stemming from her coverage of angry protests that marred Prime Minister Nikol Pashinyan’s visit to the southeastern Syunik province four years ago.

Pashinyan was jeered and insulted by local residents blaming him for grave consequences of the 2020 war in Nagorno-Karabagh as he toured regional towns in April 2021. In one of those towns, Agarak, he was hounded by dozens of furious men who swore at him, branded him a “traitor” and demanded that he leave their community.

Pashinyan described the protests as a “violation of the law,” ordering Armenia’s police and National Security Service to respond to them “in a tough manner.” At least 23 people, including eight local government officials, were arrested in the following

days. Most of them were freed by courts shortly afterwards.

Pashinyan criticized those court orders in the Armenian parliament in March this year. A few days later, investigators arrested a former senior executive of a Syunik-based mining company on charges of organizing the “hooligan” protests. He is currently under house arrest.

As part of the same probe, the Investigative Committee also indicted late last week journalist Anush Mirzoyan, who worked at the regional Zangezur TV channel and provided, together with her cameraman, live coverage of Pashinyan’s disrupted 2021 trip to Syunik. The footage of the protests was retransmitted or used otherwise by multiple media outlets, including RFE/RL’s Armenian Service.

Mirzoyan was charged with assisting in what the Investiga-

tive Committee calls “hooliganism” and “disturbances.” The law-enforcement agency refused at the weekend to elaborate on the accusations strongly denied by the journalist.

According to Mirzoyan, the investigators claim that her coverage of the anti-Pashinyan protests prompted more local residents to take to the streets and join them.

“A bad precedent is being set,” the journalist told RFE/RL’s Armenian Service. “It means that if I, you or any other media organization cover a demonstration, we will not know what will happen next.”

Earlier this month, the Armenian Ministry of Justice drafted legislation that would force online media to remove content deemed slanderous by authorities.

A Mari Usque Ad Mare

CANADA AFFIRMS ITS COMMITMENT TO THE UNITED NATIONS

In a recent press declaration made by Anita Anand, Minister of Foreign Affairs, David McGuinty, Minister of National Defence, and Gary Anandasangaree, Minister of Public Safety, a new financial commitment from the Government of Canada was announced following the 2025 United Nations Peacekeeping Ministerial (UNPKM) meeting, that was being hosted by Germany in Berlin. This new financial commitment from Canada will be totalling \$40-million and will be used to continue supporting UN peace operations and peace-building efforts around the world.

“Peace operations are part of a collective enterprise that Canada has helped to shape. The men and women who carry out these operations are saving and protecting lives, pursuing peace and embodying some of the most important ideals for which the UN stands. Our support is a vote of confidence in the continuing relevance of peacekeeping, and a recognition that our nation’s interests are well served by working with others to reform and innovate in the security interventions undertaken by the UN,” said Minister Anand.

Minister McGuinty said: “In a world facing growing instability, effective UN peacekeeping is critical. This announcement demonstrates the Canadian Armed Forces’ commitment to supporting peacekeeping operations — including through specialized military training and capacity building, and expanded airlift capabilities. Peacekeeping is a pillar of global security, and Canada will continue to lead in making it stronger and more responsive.”

FEDERAL GOVERNMENT TO SAVE CANADIANS UPWARDS OF \$840

